

ՄՊԱՆԴԱՆՈՑԻ ԱՆԱՄՆԱԲՈՒՅԺ-ՓՈՐՁԱԳԵՏԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԴԻՄՈՐԴԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Սպանդանոցի անասնաբույժ-փորձագետի վերապատրաստման դասընթացը կազմակերպվելու է առցանց տարբերակով: Դասընթացները սկսելու են սույն թվականի մայիսի 18-ից և տևելու են 6 շաբաթ: Ամբողջացման համար պահանջվում է շաբաթական մոտավորապես 18 ժամի հատկացում: Առաջին 5 շաբաթը նախատեսված է տեսական գիտելիքների, իսկ վերջին շաբաթը՝ աշխատավայրում հմտությունների ձեռք բերման համար:

Ստորև ներկայացված է դասընթացներին մասնակցելու կարգը, պահանջներն ու ընթացքը:

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՁՆԱԺԱՄԿԵՏ

Դասընթացներին մասնակցելու համար դիմումների ընդունումը կիրականացվի 2 փուլով՝ 1-ին փուլի վերջնաժամկետը՝ 2020 թվականի մայիսի 13-ի ժամը 13:00-ն է, 2-րդ փուլինը՝ 2020 թվականի մայիսի 18-ի ժամը 13:00-ը (առաջնությունը կտրվի 1-ին փուլով դիմած մասնակիցներին):

❖ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Դասընթացին մասնակցելու ցանկություն ունեցող բոլոր անձինք պետք է բավարարեն ստորև ներկայացված փաստաթղթային և նախնական գիտելիքների իմացության պահանջներին:

- **Փաստաթղթային պահանջներ**
 - ✓ **Կրթությունը հիմնավորող փաստաթուղթ.**
Բարձրագույն կրթություն անասնաբուժություն կամ անասնաբուժական սանիտարական փորձաքննություն մասնագիտություններում
 - ✓ **Ինքնակենսագրական (CV).** Ընդգրկել նաև ձեր նկարը
 - ✓ **Անձնագրի պատճեն**
 - ✓ **Մասնակցության հայտ**
 - ❖ Հայտի օրինակը կարող եք գտնել [այստեղ](#)

- **Նախնական գիտելիքների իմացության պահանջներ**
 - ✓ **Հայերենի գերազանց իմացություն**
 - ✓ **Համակարգչից և համացանցից օգտվելու կարողություն**
 - ✓ **Մասնագիտական գիտելիքներ.**

Բոլոր դիմորդները պետք է ունենան որոշ նախնական գիտելիքներ կենդանիների մարմնի կառուցվածքի ու տարբեր օրգան-համակարգերի կառուցվածքի և առողջ անատոմիական վիճակի վերաբերյալ: Գիտելիքները թարմացնելու համար դիմորդները կարող են օգտվել Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի էլեկտրոնային գրադարանում առկա [հետևյալ գրականությունից:](#)

❖ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

- Դասընթացներին մասնակցելու համար անհրաժեշտ է վերը նշված փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով ուղարկել lifelong@anau.am էլեկտրոնային փոստին:
- Պահանջները բավարարող բոլոր դիմորդներին պատասխան նամակով կտրամադրվի նախնական մասնագիտական գիտելիքների ստուգման համար նախատեսված կարճ թեստ: Վերջինս անհրաժեշտ է լրացնել և հետ ուղարկել նույն էլեկտրոնային փոստին՝ թեստն ստանալուց **24 ժամվա ընթացքում:** Թեստն անցնող դիմորդներին կտրամադրվի դասընթացներին մասնակցելու համար անհրաժեշտ ինտերնետային կայքի բանալին՝ գրանցման ցուցումով:

❖ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԳ

- **Տեսական ուսուցում.**

Ինտերնետային կայքի մուտքի բանալին ստանալուց հետո Ձեզ հասանելի կլինեն ուսուցման համար նախատեսված նյութերը: Դասընթացների տեսական մասն ամբողջացնելու համար Ձեզանից կպահանջվի տրամադրել շաբաթական մոտավորապես 18 ժամ՝ 5 շաբաթ շարունակ: Նյութերը ներառում են նախապես ձայնագրված դասախոսություններ, կարճ տեսանյութեր, պատկերներ, ընթերցման նյութեր և գիտելիքների ինքնաստուգման համար նախատեսված կարճ թեստեր:

▪ **Գործնական ուսուցում.**

Տեսական դասընթացներն ավարտելուց հետո մասնակիցները 6-րդ շաբաթվա ընթացքում կհաճախեն սպանդանոց/լաբորատորիա ստացած գիտելիքները աշխատավայրում կիրառելու նպատակով:

❖ **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Ուսուցման ծրագիր վերջնական արդյունքները կգնահատվեն՝

- Տեսական ուսուցման ավարտին՝ գրավոր քննության օգնությամբ
- Աշխատավայրում մասնագետի ինքնա-դրսևորման գնահատմամբ

❖ **ՎԿԱՅԱԿԱՆԻ ՍՏԱՑՈՒՄ**

Գրավոր քննության և աշխատավայրում իրականացրած գործունեության պահանջները բավարարող բոլոր մասնագետները կստանան սպանդանոցի **անասնաբույժ-փորձագետի վկայական:** Թափուր աշխատատեղի զբաղեցման համար մասնագետի ընտրության ժամանակ առաջնայնություն կտրվի այս վկայականն ունեցող մասնագետներին:

ՈՒՇԱԴՈՐԻԹՅՈՒՆ. Առաջին փուլի գործնական մասին կարող են մասնակցել սահմանափակ քանակությամբ մասնակիցներ: Ելնելով դիմորդների ընդհանուր քանակից, հնարավոր է առաջանա ընտրության լրացուցիչ չափանիշներ կիրառելու անհրաժեշտություն: Այսպիսի իրավիճակում մասնակիցներից կպահանջվեն լրացուցիչ փաստաթղթեր, ինչպես նաև հաշվի կառնվի քննության գնահատականը: Առաջնայնությունը կտրվի հատուկ չափորոշիչներին համապատասխանող և ամենաբարձր գնահատականները ստացած մասնակիցներին:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՅԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՆԱՄԱԿ ԳՐԵԼ՝ lifelong@anau.am էլ. փոստին:

Սպանդանոցի անասնաբույժ-փորձագետի վերապատրաստման դասընթացն իրականացվելու է ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի նախաձեռնությամբ և «Ռեզնանսային Զարգացման Գործակալություն» հասարակական կազմակերպության կողմից Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրի աջակցությամբ նախատեսվում է կազմակերպել սպանդանոցի անասնաբույժ-փորձագետների վերապատրաստման դասընթաց: Դասընթացի առցանց համակարգի միջոցով կազմակերպումը կիրականացվի Հայաստանի ազգային ագրարային համալսարանի շնորհիվ:

